
ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ՄԱԿ-Ի ՄԷՋ (1971-1975)

ԱՇԸՔԵԱՆ Շ. Պ. (Լիբանան, Բեյրութ)

Հայկական հարցը ՄԱԿ-ին առաջին անգամ ներկայացուեցաւ կազմակերպութեան հիմնադրութեան թուականին, 1945-ին: Հայերը յուշագիրներ յղեցին Կարսն ու Արտահանը Խորհրդային Հայաստանի միացնելու պահանջով: 1946-1948-ին Ցեղասպանութեան Համաձայնագիրը մշակելու և որդեգրելու ատեն, ՄԱԿ-ը կատարելապէս անտեսեց Հայկական պարագան: Այդ Համաձայնագիրը մշակուեցաւ և որդեգրուեցաւ հրէական ողջակիզումի ազդեցութեան տակ:

ՄԱԿ-ի թղթածրարներուն մէջ Հայկական ցեղասպանութեան մասին պրպտումի աշխատանքի մը անձնական մասնակցութիւն բերած ՄԱԿ-ի մօտ եզիպտական «Ալ Ահրամ» օրաթերթի թղթակից Լ. Քէշիշեան կը վկայէ հետեւալը. «Յիսնամեակի առիթով մեր կատարած աշխատանքներու ընթացքին կատարելապէս ապշած մնացինք: Ցեղասպանութեան Ուխտը ուսումնասիրելու ընթացքին, ՄԱԿ-ի արխիւներուն մէջ, չհանդիպեցանք ոչ իսկ մէկ անգամ մը հայերու անունին: Մօտ 45 ժամ ՄԱԿ-ի բոլոր ձայնագրուած (հարազատ) ժապաւենները (թէլփ և տիսք) լսելէ ետք, ապշած ու յուսահատ մնացինք ոչ իսկ մէկ անգամ յիշուած է հայու անունը: Թուրքը որպէս պատասխանատու յիշելու համար, այդ ուղղութեամբ բառ մը իսկ չէ արտասանուած: 1946-ին Անգլիոյ ներկայացուցիչ Սըր Շօքրոս, վեցերորդ իրաւագիտական յանձնախումբին մէջ, «միջամտութիւն» Միջազգային օրէնքի բացատրութեան ընթացքին յայտարարած է, թէ եւրոպական երկիրներ «միջամտեցին», երբ Օսմանեան կայսրութեան որոշ մասերու մէջ քրիստոնեաներու դէմ խտրութիւն կը գործադրուէր: Եւ այսքան միայն»¹:

Հայկական ցեղասպանութեան հարցը ՄԱԿ-ին հասցնելու հայկական նախաձեռնութիւնները սկսան 1960-ական թուականներու սկիզբը և թափ ստացան յիսնամեակէն ետք: Հայկական ջարդերու մասին առաջին անգամ խօսուեցաւ 1961-ին²: 1964-ին, ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի ժողովներուն, Կիպրոսի հարցին առիթով, քանի մը անգամ խօսուեցաւ Հայկական ցեղասպանութեան մասին: 25 յունուար 1965-ին Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Էրքին ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովին առջեւ ամբաստանեց յոյները Կիպրոսի մէջ թուրքերուն հանդէպ ցուցաբերած ոչ ընդունելի վերաբերումին համար և առաջարկեց, որ ՄԱԿ-ը Մարդկային իրաւանց սկզբունքներուն հիման վրայ, քննարկէ Կիպրոսի ապագայ գոյավիճակը, նկատի ունենալով Կիպրոսի թուրքերուն իրաւունքները: Կիպրոսի արտաքին գործոց նախարար Քիփրիանու, թուրք նախարարին ամբաստանութեանց պատասխանելով արծարծեց նաեւ Հայկական ցեղասպանութեան հարցը: Ան այդ առթիւ յայտարարեց, թէ հայկական Սփիւռքը մեծ շուքով պիտի նշէ

¹ Ազդակ, ԼԹ տարի, թիւ 49, 4 մայիս, 1965, էջ 2:

² Նոյն տեղում:

ցեղասպանութեան յիսնամեակը: Յաջորդ օրը, յունուար 26-ին, ՄԱԿ-ի մէջ Թուրքիոյ ներկայացուցիչ Օրհան Էրալփ փորձեց հերքել Թուրքիոյ պատասխանատուութիւնը Հայկական ցեղասպանութեան գծով: 27 յունուարին Քիփրիանու նոյն ամբիոնէն կրկին անգամ արծարծեց Հայկական ցեղասպանութեան պարագան³: Քանի մը ամիս ետք այդ մասին հարցապնդուելով, Ս. Քիփրիանու հաստատեց. «Առիթը ունեցայ քննարկելու Հայկական Դատը շատ մը ներկայացուցիչներու հետ ՄԱԿ-ի մէջ, և հարցը մանրամասնութեամբ բացատրելու իրենց: Անոնցմէ շատերը մեծապէս տպաւորուեցան և սուր հետաքրքրութիւն ու համակրութիւն ցոյց տուին»⁴:

1965-ին կարգ մը խորհրդարաններ որդեգրեցին հայանպաստ բանաձեւեր: Փետրուար 1-ին Ուրուկուէի խորհրդարանը Ապրիլ 24-ը յայտարարեց պաշտօնական Սուզի օր⁵: 20 ապրիլին Կիպրոսի խորհրդարանը միաձայնութեամբ վաւերացուց զօրակցական գիր մը⁶: Հայկական ցեղասպանութեան մասին Միացեալ Նահանգներու ծերակոյտը բանաձեւ ընդունեց և արձանագրեց քննկրէսի պաշտօնաթերթին մէջ⁷: 15 յուլիսին Հելսինքիի 7-րդ խաղաղութեան Համաշխարհային քննկրէսը դատապարտեց բռնութիւնը, գաղութատիրութիւնն ու ցեղասպանութիւնը, և Հայկական ցեղասպանութիւնը դատապարտող բանաձեւ որդեգրեց⁸: 1968-ին, երբ ՄԱԿ-ը օրէնք որդեգրեց «պատերազմի ընթացքին գործուած ոճիրներու անժամանցելիութեան» մասին, դարձեալ նկատի չառաւ Հայկական պարագան: Յիսնամեակէն ետք հայ քաղաքական կուսակցութիւններուն բարձրագոյն ժողովները որոշեցին Հայկական ցեղասպանութեան հարցը արծարծել ՄԱԿ-ի մէջ՝ աշխատանք տանելով այդ ուղղութեամբ պետութիւններու մօտ:

Մինչեւ 1970-ական թուականներու սկիզբ այդ աշխատանքները շօշափելի արդիւնքի չյանգեցան: Նոյնիսկ Ուրուկուէի որոշումը՝ Հայկական հարցը ՄԱԿ-ին տանելու, միւս բոլոր հայանպաստ բանաձեւերուն նման, մնաց թուղթի վրայ: Փաստօրէն, Միջազգային ընտանիքին կողմէ Հայկական ցեղասպանութիւնը դատապարտելու գործնական նախաձեռնութիւն չառնուեցաւ:

³ Զարթօնք, 3 փետրուար, 1965, էջ 1:

⁴ Ազդակ, ԼԹ տարի, թիւ 44, 27 ապրիլ, 1965, էջ 1:

⁵ Ազդակ, ԼԹ տարի, թիւ 31, 9 ապրիլ, 1965, էջ 1:

⁶ Ազդակ, ԼԹ տարի, 22 ապրիլ 1965, էջ 1: Զարթօնք, 22 ապրիլ, 1965, էջ 1:

⁷ Ազդակ, ԼԹ տարի, թիւ 49, 4 մայիս, 1965, էջ 1:

⁸ **Ռուբէն Սահակեան**, Ցեղասպանութեան պատմութիւնից, էջ 27: Ահաւասիկ այդ բանաձեւը. «Այս տարի յիսնամեակն է հայկական ջարդերի, որոնք կազմակերպուեցին օսմանեան Թուրքիայի կողմից՝ ազգային հարցը ամբողջ մի ժողովրդի բնաջնջման ճանապարհով լուծելու նպատակով: Այդ ցեղասպանութիւնը արժեցաւ մէկուկէս միլիոնից աւելի ազատասէր հայերի՝ այսինքն հայ ժողովրդի երկու երրորդի կեանքը» (նոյն տեղում: Հեղինակը մէջբերումը քաղած է՝ Էջմիածին, 1965, օգոստոս-սեպտեմբեր, էջ 69-70): Հնչակեան կուսակցութիւնը դեր ունեցած էր այս բանաձեւի որդեգրման մէջ Յ. Ճերեճեանի (Կուժունի) գործօն մասնակցութեամբ (Գանգրունի Յ., Յանուն Հայրենիքի, էջ 165-166): Բանաձեւը տե՛ս նաեւ Զարթօնք, 1 մայիս, 1965, էջ 1:

Հայկական Ցեղասպանության ճանաչումի հարցը, սերտորէն առնչուեցաւ այդ հարցի մասին ՄԱԿ-ի որդեգրած օրէնքներուն հետ: 1971-ին ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց յանձնախումբի փոքրամասնութեանց պաշտպանութեան և ոճիւրի կանխարգիլման ենթայանձնախումբը առաջարկեց ուսումնասիրութիւն մը պատրաստել ցեղասպանութեան կանխարգիլման ու պատժումի մասին: Առաջարկը վաւերացուեցաւ Յանձնախումբին կողմէ: 1972-ին նախնական տեղեկագիրը (պատրաստուած Ենթայանձնախումբի անդամ և անոր կողմէ յատուկ զեկուցաբեր նշանակուած ռուանտացի Նիքոտեմ Ռուհաշեանքիքոյի կողմէ) ներկայացուեցաւ Ենթայանձնախումբի 25-րդ նստաշրջանին⁹: Տեղեկագիրին 8-րդ պարբերութեան տակ յիշատակուած էին ցեղասպանութեան բազմաթիւ օրինակներ, ցոյց տալու համար որ ցեղասպանութիւնը նոր երեւոյթ մը չէ: Հայկականը չէր նշուած:

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարը նոյեմբեր 1972-ին Կազմակերպութեան բոլոր անդամ պետութիւններէն (132 պետութիւն) խնդրեց, որ մասնաւոր զեկուցաբերին օգտակար դառնան անոր տեղեկութիւններ հայթայթելով: Մինչեւ մայիս 1973-ին 21 անդամ պետութիւններ պատասխան դրկեցին¹⁰:

Առաջին անգամ Հայկական ցեղասպանութեան հարցը զեկուցաբերին և ՄԱԿ-ի Ընդհանուր քարտուղար Ք. Վալտհայմին ուշադրութեան յանձնեց Զաւէն Մսրրլեան¹¹ (Պէրու) անձնական նախաձեռնութեամբ: Ան 14 սեպտեմբեր 1972-ին այդ մասին նամակ մը կը գրէ Ն. Ռուհաշեանքիքոյին: Մինչեւ դեկտեմբերի կէսը պատասխան չստանար: 18 Դեկտեմբերին այս անգամ կը գրէ ՄԱԿ-ի Ընդհանուր քարտուղար Ք. Վալտհայմին: Ամիս մը ետք պատասխան նամակ կը ստանայ Ցեղային խտրականութեան արգիլման և փոքրամասնութեանց պաշտպանութեան բաժանմունքի ղեկավար Ճորճ Պրանտիի ստորագրութեամբ, թէ անոր դրկած տեղեկութիւնները նկատի պիտի առնուին յաջորդ տեղեկագրին պատրաստութեան ատեն¹²:

⁹ Attarian Varoujan, *Le Genocide des Armeniens devant l'ONU, Bruxelles, 1997, p. 58.*
Toriguian Shavarsh, *The Armenian Question and International Law, university of La Vern press, California, U.S.A., 2nd edition, 1988, p. 114.*

¹⁰ Մսրրլեան Զաւէն, Հայերու դէմ գործուած Ցեղասպանութիւնը ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց Յանձնախումբին առջեւ (Երիտասարդ հայ, թիւ 92, 4 մայիս, 1974, էջ 12): Այդ պետութիւններն են. Արժանթին, Աւստրիա, Պուլկարիա, Կեդր. Ափրիկեան Հանրապետութիւն, Քոնկո, Կիպրոս, Ֆիճի, Ֆինլանտա, Իրաք, Իսրայէլ, Իտալիա, Քուէթ, Մալաւի, Հոլանտա, Նոր Զելանտա, Ֆիլիպիններ, Լեհաստան, Ռումանիա, Ռուանտա, Ուքրաինա, Խորհրդային Միութիւն: ՄԱԿ-ի այս անդամ պետութիւններէն բացի, նաեւ՝ Արեւմտեան Գերմանիա, Թօնկա և Հարաւային Վիեթնամ (նոյն տեղում):

¹¹ Տե՛ս համառոտակի իր մասին Հայկական հարց (հանրագիտարան), Ե., 1996, էջ 342:

¹² Տեսնել աւելի մանրամասն՝ Ժ. Դ., Հայկական Ցեղասպանութիւնը ՄԱԿ-ի պաշտօնական արձանագրութիւններուն մէջ (Երիտասարդ Հայ, թիւ 88, 1 դեկտեմբեր, 1973, էջ 9-11): Նամակներուն լուսանկարները տե՛ս էջ 10 և 11: Նաեւ՝ Մսրրլեան Զաւէն, Հայերու դէմ գործուած Ցեղասպանութիւնը ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց Յանձնախումբին առջեւ (Երիտասարդ հայ, թիւ 92, 4 մայիս, 1974, էջ 12):

Զեկուցաբերին նոր տեղեկագիրը քննարկուեցաւ սեպտեմբեր 1973-ին Ենթայանձնախումբի 26-րդ նստաշրջանին (Ժընէւ): Պատմական բաժինին մէջ (15-36-րդ պարպերութիւններ) 30-րդ պարպերութիւնը 1915-ի հայութեան դէմ Թուրքիոյ գործադրած Ռճիրը կը նկատէ Ի դարու ցեղասպանութեան առաջին պարագայ: 30րդ պարպերութիւնը հետեւեալը կ'ըսէ. «Անցնելով ներկայ ժամանակաշրջանին, կրնանք յիշել գոյութիւնը փաստագրական հարուստ թղթածրարի մը, առնչուող 20-րդ դարու առաջին Ցեղասպանութեան՝ Հայկական ցեղասպանութեան»¹³: Այսպիսով, 30-րդ պարպերութեամբ, առաջին անգամ ըլլալով, ՄԱԿ-ի վաւերաթուղթի մը մէջ Հայկական ցեղասպանութիւնը արձանագրուեցաւ իբրեւ 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւն: Ի դէպ, ֆրանսատառ «Լը Ֆիկարօ»ն տակաւին 24-25 ապրիլ 1965-ին իր թիւին մէջ Ճորճ Տիւփուայի գրիչով գրած էր նոյնը. «Յիսուն տարի առաջ՝ քսաներորդ դարու առաջին ցեղասպանութիւնը»¹⁴:

Ենթայանձնախումբի երկու յաջորդական նիստերուն (18 և 19 սեպտեմբեր, 1973, նախագահ՝ Եգիպտոսի ներկայացուցիչ Ահմէտ խալիֆա) ներկայ գտնուեցան Ենթայանձնախումբի անդամ 27 երկիրներուն ներկայացուցիչները: Թուրքիան, որպէս ՄԱԿ-ի անդամ, նիստերուն ներկայ գտնուեցաւ իբրեւ դիտորդ: Ենթայանձնախումբի անդամները կը ներկայացնեն անհատ մասնագէտներ, իսկ Մարդկային իրաւանց յանձնախումբի ներկայացուցիչները՝ պետութիւններ: ՄԱԿ-ի այդ մարմիններուն մէջ Հայութիւնը ներկայացուցիչ չունէր և ոչ ալ իր տեսակէտը ներկայացնող կամ պաշտպանող մը:

Ենթայանձնախումբը գնահատելով զեկուցաբերին աշխատանքը, առաջարկեց անոր որ աւելի ընդլայնուած զեկուցում մը պատրաստէ Ենթայանձնախումբի 27-րդ նստաշրջանին ներկայացնելու համար՝ հիմնուելով արտայայտուած տեսակէտներուն վրայ: Ենթայանձնախումբը նաեւ կոչ ուղղեց այն պետութիւններուն, որոնք չեն ներկայացուցած իրենց տեսակէտները առանց ուշացումի կատարեն ասիկա: Այս բանաձեւը, որ ներկայացուցին Յունաստանի և Գանայի ներկայացուցիչները (Էրիքի Տանէս և Ի. Ք. Սեքեմա) և որուն դէմ առարկեց միայն Փաքիստանի ներկայացուցիչը, ընդունուեցաւ միաձայնութեամբ¹⁵: 30-րդ պարպերութիւնը արձանագրեց Հայկական ցեղասպանութեան պատմական փաստը: Ոչ մէկ ձեւով դատապարտեց Թուրքիան, և կամ հատուցում պահանջեց անկէ: Նոյնիսկ հոն չէր նշուած Թուրքիոյ անունը: 30 պարպերութիւնը հայութեան բան չէր խոստանար:

ՄԱԿ-ի պաշտօնական մէկ տեղեկագրին մէջ Հայկական ցեղասպանութեան նշումը սակայն անհանգստացուց Թուրքիան: Դիւանագիտական ճնշումներով և Լոպպինկի միջոցով աշխատանք տարաւ ջնջել տալու համար 30-րդ պարպերութիւնը: Զեկուցումը, 6 մարտ, 1974-ին ներկայացուեցաւ ՄԱԿ-ի

¹³ Attarian Varoujan, *Le Genocide...*, p. 58. Toriguian Shavarsh, *The Armenian Question*, p. 114.

¹⁴ Տե՛ս Ազդակ, ԼԹ տարի, թիւ 44, 27 ապրիլ, 1965, էջ 1:

¹⁵ Սըրքեան Զաւէն, Հայերու դէմ գործուած Ցեղասպանութիւնը ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց Յանձնախումբին առջեւ (Երիտասարդ հայ, թիւ 92, 4 մայիս 1974, էջ 12):

Մարդկային իրաւանց յանձնախումբի¹⁶ 30-րդ նստաշրջանին: Թուրքիոյ ներկայացուցիչը՝ Օսման Օլչա, պահանջեց տեղեկագիրէն վերցնել պատմական ակնարկը և դուրս ձգել 30-րդ պարպերութիւնը (ներառեալ 29-րդը՝ Խաչակրութեան յատուկ, և 28-րդը՝ սպանական հաւատաքնութեան մասին)¹⁷:

Յանձնախումբի անդամ 27 պետութիւններէն եօթը (Փաքիստան, Իտալիա, Թունուգ, Նիկերիա, Ռումանիա, Աւստրիա, Միացեալ Նահանգներ) ուղղակի ձայնակցեցան Թուրքիոյ տեսակէտին և պահանջեցին, որ 30-րդ պարպերութիւնը ջնջուի: Իսկ չորս պետութիւններ (Հնդկաստան, Ֆրանսա, Իրան, Իրաք) արդարացի գտան Թուրքիոյ տեսակէտը¹⁸: Վերոնշեալ երկիրներէն երեքին մէջ՝ Միացեալ Նահանգներ, Ֆրանսա, Իրան, հայկական մեծ գաղութ կար, և ուր, ինչպէս տեսանք, 1965-էն սկսեալ Հայ Դատի քարոզչութիւն կը տարուէր: Սակայն այս պետութիւնները դիրքորոշուեցան ի նպաստ Թուրքիոյ և 30-րդ պարպերութեան դէմ: Աւելի՛ն: Կիպրոս, որ 1965-ին ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովին մէջ պաշտպանած էր Հայկական ցեղասպանութեան հարցը, մնաց լուռ: Նոյն կէցուածքը ունեցաւ նաեւ Լիբանանը: Ոչ մէկ պետութիւն պաշտպան կանգնեցաւ 30-րդ պարպերութեան: Մինչ Թուրքիոյ ներկայացուցիչը հանդէս եկաւ իր պետութեան հերքումի ու ուրացումի քաղաքականութեամբ՝ պահանջելով 30-րդ պարպերութեան ջնջումը¹⁹:

Այսպիսով, միջազգային քաղաքական բեմին վրայ հայութեան ոչ ազդու քաղաքական ներկայութիւնը պատճառ դարձաւ, որ ընդդիմութեան լայն ճակատ մը յառաջանայ Հայկական ցեղասպանութիւնը յիշատակող 30-րդ պարպերութեան դէմ: Այդ ճնշումին դիմաց, յատուկ զեկուցաբերը տեղի տուաւ: ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց յանձնախումբը տեղեկագիրը վերադարձուց Ենթայանձնախումբին վերամշակման համար:

Պատմական պարպերութեան մը մէջ Հայկական ցեղասպանութեան նշումին դէմ Թուրքիոյ պետական հակազդեցութիւնը հակասականօրէն դրական ազդեցութիւն ունեցաւ: Ձեւաորոշեցաւ հայկական հակազդեցութիւն մը. սփիւռքահայ զանգուածներու զօրաշարժին զուգահեռ Հայ Դատի յանձնախումբերուն աշխատանքները աշխուժացան Միացեալ Նահանգներու և նաեւ

¹⁶ Յանձնախումբին անդամ էին 27 պետութիւններ. Աւստրիա, Իտալիա, Ֆրանսա, Դանիա, Հոլանտա, Միացեալ Նահանգներ, Պուկարիա, Ռումանիա, Կիպրոս, Լիբանան, Իրաք, Եգիպտոս, Իրան, Թունուգ, Փաքիստան, Սենեկալ, Սիէրրա Լիոնէ, Ղանա, Նիքարակուա, Փերու, Փանամա, Տոմինիկեան Հանրապետութիւն, Աքուատոր, Զայիր, Հնդկաստան, Չիլի, Պելոտուսիա:

¹⁷ Attarian Varoujan, *Le Genocide...*, p. 59. Torigian Shavarsh, *The Armenian Question*, p. 114-115: Զաւէն Մսրըլեան, Հայերու դէմ գործուած Ցեղասպանութիւնը ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց Յանձնախումբին առջեւ (Երիտասարդ հայ, թիւ 92, 4 մայիս 1974, էջ 13-14):

¹⁸ Մանրամասնօրէն տե՛ս Ազդակ, 3 ապրիլ, 1974, էջ 1:

¹⁹ Մանրամասնօրէն տե՛ս Ազդակ, 19 մարտ, 1974, էջ 1: Օսման Օլչայ հետեւեալ թէգերը յառաջ քաշեց. Հայերը Օսմանեան կայսրութեան մէջ առանձնաշնորհեալ փոքրամասնութիւն էին, ապստամբեցան, օրինական իշխանութեան վրայ գէնք վերցուցին, թուրք բնակչութիւն ջարդեցին: Օսմանեան կառավարութիւնը պաշտպանողական միջոցառումներու դիմեց, կանխարգելիչ քայլեր առաւ, հայերը տեղափոխեց պատերազմական շրջաններէն, կառավարութիւնը գործադրեց իր օրինական իրաւունքը, կարելի չէ պատերազմական արարքները նոյնացնել ցեղասպանութեան ոճիրին հետ, եւ այլ:

Ֆրանսայի մէջ²⁰: Այդ ուղղութեամբ աշխատանքները սկսան մարտ 1974-էն ետք: Հայկական հակազդը արտայայտուեցաւ դիւանագիտական-յարաբերական աշխատանքներով և ցուցական ելոյթներով: Հայկական գաղութներուն մէջ 30-րդ պարպերութեան ի նպաստ ցոյցեր և միթինքներ տեղի ունեցան թրքական դեսպանատուններու առջեւ²¹: 1974-ի Ապրիլեան ցոյցերը ունեցան շեշտակի քաղաքական բնոյթ և ներկայացուցչական դիմագիծ: Բողոքեցին 6 մարտին ՄԱԿ-ի մէջ 30-րդ պարպերութիւնը չեղեալ համարելու որոշումին դէմ: Բողոքի բանաձեւեր քուէարկուեցան բազմամարդ ցոյցերու ընթացքին և ղրկուեցան ՄԱԿ-ին, Մարդկային իրաւանց յանձնախումբին, մարտ 6-ին՝ Թուրքիոյ ձայնակցած պետութեանց դեսպանատուններուն: Թուրքիոյ դեսպանատունները մերժեցին ընդունիլ բողոքի յուշագիրները, որ բարձրաձայն կարդացուելէ ետք փակցուեցան դեսպանատուններու փակ դռներուն վրայ²²: Ի դէպ, Ապրիլեան ցոյցերը 1970-ական թուականներէն սկսած՝ դարձած էին բազմամարդ ու աւելի յախտոն և կը յատկանշուէին երիտասարդական դիմագիծով:

Հայ Դատի յանձնախումբերը քաղաքական-յարաբերական կապերու միջոցով աշխատանք տարին 30-րդ պարպերութեան դէմ քուէարկած պետութիւններն ու անոնց ներկայացուցիչները համոզելու, որ քուէարկեն ի նպաստ տեղեկագրին: Հայ ազգային մարմինը (Armenian National Committee, Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբը) կապեր հաստատեց ոչ կառավարական կազմակերպութիւններու հետ: Հայ ազգային մարմինի պատուիրակութիւն մը հանդիպում ունեցաւ Յունաստանի, Կիպրոսի, և Խորհրդային Միութեան ՄԱԿ-ի պատուիրակութեանց հետ: Պատուիրակութիւնը անոնց հետ արծարծեց 30-րդ պարպերութեան հարցը: Այդ առիթով ուշագրաւ եղաւ Խորհրդային Միութեան պատուիրակին կեցուածքը: Ան յայտնեց, թէ հարցը արծարծած է ՄԱԿ-ի խորհրդային պատուիրակութեան անդամներուն հետ և խոստացաւ հայկական թղթածրարը անմիջապէս Մոսկուա ուղարկել²³:

Հայաստան եւս պետական մակարդակով իր բաժին մասնակցութիւնը բերաւ աշխատանքներուն: Հաղորդելով 30-րդ պարպերութեան համար Սփիւռքի մէջ տարուող աշխատանքներուն մասին, Խորհրդային Հայաստանի արտաքին

²⁰ Անընդհատ պայքար՝ Հայկական ցեղասպանութեան ճանաչումին համար (Հարցազրոյց՝ Հ.Յ.Դ. Հայ Դատի Պաշտպան Յանձնախումբի ատենապետ Արա Գրիգորեանի հետ), Ազդակ, 21 ապրիլ 2000, էջ 6:

²¹ Արեւմտեան երկիրներու մէջ ՄԱԿ-ի, ՄԱԿ-ի թրքական պատուիրակութեան շէնքերուն, թրքական դեսպանատուններու առջեւ բռն ցոյցեր տեղի ունեցած էին նաեւ ապրիլ 1971-ին: Ինչպէս, օրինակ, Ուաշինկթընի, Նիւ Եորքի, Լոս Անճելըսի, Քանատայի, Ֆրանսայի մէջ (Սփիւռքահայ կեանք, ԱՇԴ, Բ տարի, թիւ 28, 30 մայիս, 1971, էջ 462-464):

²² Տե՛ս 1974 Ապրիլի ցոյցերուն մասին ԱՇԴ, Ե տարի, թիւ 21, 12 մայիս, 1974, էջ 341-344: Ապրիլեան Եղեռնի ոգեկոչումները Սփիւռքի զանազան կեդրոններուն մէջ:

²³ ԱՇԴ, Ե տարի, թիւ 34, 11 օգոստոս, 1974, էջ 560: 1974 մարտ 6-ի նիստին Խորհրդային Միութեան պատուիրակները առաջարկած էին, որ ցեղասպանութեան հարցը ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց յանձնախումբին կողմէ քննուի առանձնաբար դոմփակ նիստի մը ընթացքին:

գործոց նախարար Կ. Բ. Ուդումեան հոկտեմբեր 1974-ին պաշտօնապէս դիմեց Խորհրդային Միութեան արտաքին գործոց նախարարութեան, որ ՄԱԿ-ի մէջ այդ երկրի ներկայացուցիչը ՄԱԿ-ի Իրաւանց յանձնախումբին մէջ պաշտպանէ 30-րդ պարալէրութիւնը²⁴: Հայ նախարարը իր նամակին մէջ Մոսկուայի ուշադրութեան յանձնեց 30-րդ պարալէրութեան հարցով Ռումանիոյ թրքամէտ կեցուածքը²⁵:

1974-ի մարտ 6-ի նիստէն ետք, հայանպաստ դիրքորոշում մը արձանագրուեցաւ Ֆրանսայի մէջ: Նախագահական թեկնածու Վալերի Ժիսքար Տիսքէն, Մարսելի Հայ Դատի յանձնախումբին յղած 16 մայիս, 1974 թուակիր նամակով կը ճանչնար Հայկական ցեղասպանութիւնը ու կ'աւելցնէր հետեւեալը. «Կը կարծեմ որ ներկայիս, ինչպէս անցեալին, Ֆրանսա պարտականութիւն ունի գործօն նպաստ մը բերելու աշխատանքի մը, որ սերտօրէն կապուած է իր ասանդութիւններուն: Իր պարտականութիւնը պիտի ըլլայ, ՄԱԿ-էն ներս, թէ այլուր, թիկունք կանգնիլ պատմական ճշմարտութեան և արդարութեան պահպանման»²⁶: Մինչդէռ 6 մարտ 1974-ի նիստին ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց յանձնախումբին անդամ Ֆրանսայի ներկայացուցիչը (Փիէր Ժիւվիկէ) արդարացնելով Թուրքիոյ պատուիրակին տեսակէտը, այնքան ալ ճիշդ չէր գտած ցեղասպանութեան մասին պատմական ակնարկի մը պատրաստութիւնը, երբ տակաւին կարելի չէր եղած իրաւական սահմանում մը տալ ցեղասպանութեան ոճիրին: Ատկէ տարի մը առաջ, 1973-ին լարուած էին թուրք-ֆրանսական յարաբերութիւնները Մարսելի մէջ Եղեռնի յուշարձան կանգնեցնելու խնդրով: Փետրուար 1973-ին Թուրքիա տուն կանչեց Ֆրանսայի մէջ իր դեսպանը (Հասան Ըշրք) բողոքելու համար յուշարձանին արձանագրութեան դէմ, ինչ որ դիւանագիտական լարուածութիւն ստեղծեց երկու պետութիւններուն միջեւ²⁷:

Մարտ 1974-ին յաջորդած մէկուկէս տարուան Հայ Դատի աշխատանքները մասնակի յաջողութիւն մը արձանագրեցին սեպտեմբեր 1975-ին գումարուած Փոքրամասնութեանց պաշտպանութեան և խտրականութեան կանխարգիլման ենթայանձնախումբի 28 նստաշրջանին (Ժըննէ): Պետութիւններու ներկա-

²⁴ ՀՀ ԱԱ, 326, ց. 1, գ. 555, թ. 8:

²⁵ Նոյն տեղում, թ. 2:

²⁶ Ազդակ, 51-րդ տարի, 10 յունիս, 1977, էջ 4: Տարի մը չանցած, ապրիլ 1975-ին, Ֆրանսայի Մարսելի քաղաքի ոստիկանական իշխանութիւնները արգիլեցին Ապրիլ 24-ի ցոյցի առիթով հայութեան պահանջները ներկայացնող պաստառներուն վրայ գրել «թուրք» և «գրաւեալ հողեր» բառերը: Այս պատճառով 60-ամեակի ոգեկոչման Մարսելի Յանձնախումբը բողոքի նամակ մը դրկեց Ֆրանսայի նախագահին (ԱՇԴ, 2 տարի, թիւ 22, 25 մայիս, 1975, էջ 345):

²⁷ Ազդակ, 14 փետրուար, 1973, էջ 1: Թուրքիոյ օրուան արտաքին գործոց նախարարը (Հալիւք Պայիւքէ), 14 փետրուարին յայտարարեց, թէ իր դեսպանին Անգարա վերադարձը բողոքի արտայայտութիւն մըն է ընդդէմ Մարսելի մէջ բարձրացած յուշարձանին որուն վրայի գրութիւնը կ'ամբաստանէ Թուրքիան: Բացման հանդիսութեան (11 փետրուար, 1973) ներկայ գտնուած էին Ֆրանսայի վարչապետին ներկայացուցիչ նախարար Ժոզէֆ Քոմիթի և Մարսելի քաղաքապետ Կաստոն Տ'Էֆէր: Մարսելի յուշարձանին վրայի գրութիւնը հետեւեալն է. «Ի յիշատակ 1915-ի թուրք ղեկավարներու Ցեղասպանութեան զոհ 1.500.00 հայերուն, ի փառս Ազատութեան և Ֆրանսայի համար զոհուած դիմադրականներուն և մարտիկներուն»: Տէ ս նաեւ Սփիւռք, ԺԵ տարի, 18. 2. 1973, էջ 1:

յացուցիչներ, որոնք 1974-ին կանգնած էին Թուրքիոյ ներկայացուցիչին կողքին և պաշտպանած էին Թուրքիոյ տեսակետը, Ժընեւի Ժողովին արտայայտուեցան 30-րդ պարպերութիւնը պահպանելու ի նպաստ: «1975-ին գումարուած Փոքրամասնութեանց Պաշտպան և Խտրականութեան Կանխարգիլման Ենթայանձնախումբի Ժողովը յաղթանակ մը եղաւ մեզի համար, տարուած աշխատանքներուն իբրեւ արդիւնք,- կը գրէ ՄԱԿ-ի այդ Ժողովին անձնապէս մասնակցած Շ. Թորիկեան²⁸, ու կ'աւելցնէ,- Ենթանձնախումբի անդամներուն մեծամասնութիւնը եկաւ քննադատելու Մարդկային Իրաւանց կարգ մը անդամներու արտայայտութիւնները Ցեղասպանութեան տեղեկագրի 30-րդ պարպերութեան դէմ»²⁹:

Թուրքիոյ ներկայացուցիչը այդ Ժողովին անգամ մը եւս արտայայտուեցաւ 30-րդ պարպերութեան դէմ և ճնշում բանեցուց: Հայկական կողմին տեսակետները պաշտպանեց Շ. Թորիկեան՝ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի միջազգային յարաբերութեանց ներկայացուցիչի հանգամանքով: Ան առաջ քաշեց հետեւեալ տեսակետները. քաղաքական ճնշում պէտք չէ կիրարկուի պատմական ճշմարտութիւններու պարագային, ապագայ ցեղասպանութիւնները կանխարգիլելու համար պէտք է դատաւարտութիւն տեղի ունեցածները, մարդկային զիտակցութեան համար ծանր բեռ է Հայկական ցեղասպանութիւնը³⁰:

Հայկական հակազդը Թուրքիոյ ուրացման ու հերքումի քաղաքականութեան դէմ արտայայտուեցաւ նաեւ ակադեմական ճակատի վրայ: 1970-ական թուականներու առաջին կեսին սկսան լոյս տեսնել զիտական հրատարակութիւններ Հայկական հարցի ու ցեղասպանութեան մասին: Նոյն ինքն փրոֆ. Շ. Թորիկեանի հեղինակութեամբ անգլերէնով լոյս տեսած «Հայկական Հարցը ու Միջազգային Օրէնքը»³¹ (1973) առաջին հրատարակութիւններէն եղաւ: Հոն թեգերու վերածուած կը գտնենք 1965-էն ետք, միջազգային կազմակերպութիւններուն և պետութիւններուն յղուած յուշագիրներուն մէջ արծարծուած հայկական տեսակետները՝ ինչպէս շարունակական ցեղասպանութեան գաղափարը, միջազգային օրէնքներու համապատասխան ըլլալը՝ Հայկական ցեղասպանութեան պարագային, Հայկական պահանջատիրութեան իրաւական (Սեւրի դաշնագիր)-պատմական հիմունքները եւ այլն: Հեղինակը Հայկական պահանջատիրութիւնը կը հիմնաւորէ Միջազգային օրէնքին սկզբունքներուն վրայ, ինչպէս՝ Մարդկային իրաւանց պաշտպանութիւն, ազգերու ինքնորոշման իրաւունք, մարդկութեան դէմ գործուած ոճիրներու պատժում. կը հաստատէ հայկական պահանջատիրութեան և պահանջներուն արդարացիութիւնն ու

²⁸ Շ. Թորիկեանի կեանքին ու Հայ Դատի աշխատանքներուն մէջ անոր ունեցած ներդրումին մասին տես **Փամպուքեան Ե.**, Շաւարշ Թորիկեան (Հայ Դատի Անխոնջ Յառաջապահը), Դրոշակ, ԻԲ տարի, թիւ 14, 23 հոկտեմբեր, 1991, էջ 13-16:

²⁹ Հայասպանութիւնն և Ամերիկեան քոնկրետը, խմբագիր՝ Թորիկեան Շ., Պէյրութ, 1978, էջ 5:

³⁰ **Torquian Shavarsh**, *The Armenian Question and International Law*, 2nd edition, p. 116.

³¹ **Torquian Shavarsh**, *The Armenian Question and International Law*, Beirut-Lebanon, 1973, 330 p.

իրաւունքներու պաշտպանութիւնը Միջազգային օրէնքի հիմունքներով. կը հաստատէ Հայ ազգի իրաւունքներու նկատմամբ եւրոպական պետութիւններու ու Միացեալ Նահանգներուն պատասխանատուութիւնն ու Արեւմտեան Հայաստանը բռնագրաւուած պահելու՝ Թուրքիոյ անօրինականութիւնը՝ վեր առնելով հայութեան (Սփիւոք և Խորհրդային Հայաստան) պահանջատերի իրաւացիութիւնը:

Սեպտեմբեր 1978-ին, ցեղասպանութեան մասին փաստաթուղթը վերջնական ձեւի մէջ ներկայացուեցաւ Ենթայանձնախումբին, առանց խնդրոյ առարկայ 30-րդ պարպերութեան³²: Հակառակ 1974-ին յաջորդած չորս տարիներու աշխատանքին, հայկական կողմի աշխատանքները դրական արդիւնքի մը չյանգեցան: Աշխարհաքաղաքական իրադրութիւնը Թուրքիոյ շուրջ կը մնար աննպաստ, որեւէ լուրջ բեկում յառաջացնելու Հայ Դատի արդիւնաւորման համար: Թուրքիա Ատլանդեան ուխտի անդամ էր, և իբրեւ այդպիսին, Միացեալ Նահանգներու պաշտպանեալը: Ասով մէկտեղ, աշխատանքները շարունակուեցան: Ատիկա եղաւ հետեւողական և յամառ հետապնդում մը, որ շարունակուեցաւ մինչեւ 1985, երբ ՄԱԿ-ը ճանչցաւ Հայկական ցեղասպանութիւնը³³:

ВОПРОС АРМЯНСКОГО ГЕНОЦИДА В ООН (1971-1975)

АШЫКЯН Ш. П. (Ливан, Бейрут)

Резюме

Обсуждение вопроса армянского геноцида в ООН имело место в начале 60-ых годов минувшего века, приняв более широкие масштабы после 1965 года. Парламентами ряда стран (Уругвай, Кипр, США) были приняты документы, способствующие этому вопросу. Однако до 70-ых годов XX в. вопрос о геноциде армян так и не стал предметом обсуждения в ООН.

В 1973 г. вопрос обсуждался в Комиссии по правам человека ООН, впервые найдя отражение в 30-ом параграфе ее резолюций, принятых Подкомиссией по защите прав человека и предотвращению преступлений. Под сильным диктатом Турции Комиссия по правам человека ООН вернула этот документ вышеназванной подкомиссии на доработку.

Усилиями организаций армянской диаспоры и Армении дальнейшее обсуждение вопроса геноцида армян также не привело к позитивным результатам. Лишь в 1995 г. ООН признала геноцид армян.

³² Toriguan Shavarsh, *The Armenian Question and International Law*, 2nd edition, p. 116.

³³ ԱՇԴ, ԺԶ տարի, թիւ 31, 17 օգոստոս, 1985, էջ 591, թիւ 34-35, 14 սեպտեմբեր, 1985, էջ